

ԲԱՌԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՊԱՐԱՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Հայերենի բառապաշարի պատմական զարգացման օրինաչափությունների հետազոտումը ցույց է տալիս, որ, ի տարբերություն քանակով սակավ մենհիմաստ բառերի¹, բազմիմաստ բառերը շատ են: Այս երևույթը բացատրելի է ինչպես բառիմաստի փոփոխության ընդհանուր օրինաչափություններով, այնպես էլ հայերենի զարգացման պատմությամբ²: Բազմիմաստությունը՝ որպես լեզվի բառապաշարի պատմական զարգացման հետևանք, հատուկ է թե՛ գրական, թե՛ խոսակցական լեզուներին, թեև, ըստ էդ. Աղայանի, գրական լեզվում այն ավելի մեծ չափերի է հասնում՝ պայմանավորված նրա գործառնություններով³: Այդուհանդերձ, հայերենի տարածքային միավորները՝ բարբառներն ու խոսվածքները, հարուստ են բառիմաստի բազմացման երևույթներով՝ որպես կենդանի խոսքի իմաստային համակարգում մշտապես կատարվող տեղաշարժերի յուրօրինակ դրսևորում:

Ապարանի տարածաշրջանի 21 խոսվածքները՝ որպես կենդանի խոսքի դրսևորումներ, ըստ լեզվական հատկանիշների, մասն են կազմում իրենց տարածական բուն հիմքը կորցրած Մշո, Վանի, Դիադինի և այլ բարբառների⁴, բառային մակարդակում ցուցաբերած այլազան առանձնահատկություններով հանդերձ, ունեն բազմիմաստության ուշագրավ դրսևորումներ: Ինչպես նկատել է էդ. Աղայանը, բարբառների բառային կազմում տեղային բնույթի տարբերությունները առաջանում են ոչ միայն նորակազմ բառերով, փոխառություններով, այլև բառերի իմաստային փոփոխություններով⁵: Ուստի սույն հոդվածում փորձ է արվում ցույց տալու բառիմաստի փոփոխության դրսևորումները Ապարանի խոսվածքներում՝ բացահայտելով դրանց պատճառները:

Նկատենք, որ, ի հակադրություն գրական լեզվում առկա բառիմաստի փոփոխության, խոսակցական լեզվում բառիմաստի բազմացման պատճառները միանգամայն այլ են՝ կապված մարդկանց առօրեական և կենցաղային գործունեության հետ, ինչպես նաև՝ «բազմիմաստությունը որոշող հանգամանք կարող են ծառայել խոսքն ասելու ժամանակ ասողի և խոսողի դրությունը, շրջապատը, խոսքի ընդհանուր բովանդակությունը, խոսողի ու իր խոսակցի արվեստակցությունը և այլն»⁶: Ապարանի խոս-

¹ Տե՛ս Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն և բառագիտություն), հ. 1, Եր., 1970, էջ 193:

² Տե՛ս էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 47:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 47:

⁴ Հմմտ. մեր «Գոյականի քերականական կարգերի առանձնահատկությունները Ապարանի խոսվածքներում» հոդվածը, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2009, № 2, էջ 187:

⁵ Հմմտ. էդ. Աղայան, Մեղրու բարբառը, Եր., 1954, էջ 258:

⁶ Տե՛ս Ս. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 140:

վածքներում եղած իմաստափոխության դրսևորումները կներկայացնենք ըստ էդ. Աղայանի «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատության դասակարգման:

Ապարանի խոսվածքներում իմաստափոխության երևույթները, ըստ իմաստափոխական հիմունքների, մի քանի տեսակի են:

ա. Իմաստափոխություն նմանության զուգորդությամբ: Այսպիսի իմաստափոխության հիմունք կարող է լինել ձևի, արտաքին գծագրության, ֆիզիկապես դրսևորվող նմանությունը: Նման իմաստափոխության առատ փաստեր են տալիս ուսումնասիրվող խոսվածքները: Այս պարագայում գործ ունենք փոխաբերության հետ, երբ բառը, իր հիմնական իմաստն ամենևին չկորցնելով, փոխաբերության հիմքով ձեռք է բերում երկրորդական, լրացուցիչ, նոր իմաստ՝ դառնալով բազմիմաստ բառ: Խոսվածքներում նմանության զուգորդությամբ իմաստափոխության են ենթարկվում ինչպես հայերեն, այնպես էլ փոխառյալ բառերը: Ստորև բերենք նմանության զուգորդմամբ իմաստափոխության օրինակներ:

«Պամփրռ» – «խոշոր տեսակի ուժեղ շուն» բառը խոսվածքներում ունի «հսկա» իմաստը՝ *«էն մէր գամփրռ ծիծրն դօր ա»:*

Բազմիմաստ **«թաթ»** բառը Ապարան քաղաքի խոսվածքում ունի նաև «ակիշ» իմաստը՝ *«խացի թաթըն յընգիր իր թունդիր»:*

Փոխառյալ **«թավան»** – «առաստաղ» բառը խոսվածքներում ունի «պարտք ու պահանջի մեջ ընկած» իմաստը՝ *«թավանի տագ իմ յընգէ, պըրի տունսի ծախիմ»:*

«Լըփ» – «բուռ, ձեռքի ափ» բառը խոսվածքներում գործառվում է նաև որպես «չափի միավոր»՝ *«մէ լըփ աղ կիդաս»:*

«Կանանչ» զուգորդումը խոսվածքներում գործածվում է որպես գոյական՝ «խոտ, նոր ծլած խոտ» նշանակությամբ՝ *«կանաչըն ծըլէ, պըրի կանանչ քաղիմ հօռտըզներու համար»:*

Արաբերենից փոխառյալ **«մալ»** – «անասունների խումբ» բառը խոսվածքներում ունի «անհասկացող մարդ, անասուն» իմաստը՝ *«տօ՛ մալ, հէրիկ ա խօսաս»:*

«Պինդ», «փակ» ածականները ձեռք են բերել «ժլատ» իմաստը՝ *«էդի պինդ, փագ կընիգ ա, ձուն էլ յուզիս, չիդա»:*

«Դագ» – «տակ» կապը Նիգավանի խոսվածքում նմանության զուգորդմամբ ձեռք է բերել «ճակնդեղ» իմաստը՝ *«գարմիր դագըն գէփինկ, գուղինկ»:*

«Տըկծօր» – «տիկ» բառը Արայիի խոսվածքում ձեռք է բերել «խմած մարդ» իմաստը՝ *«տըկծօր ա դառէ, յէդըն խօսալ չէդնի»:*

«Քաֆտառ» – «տարեց մարդ» բառը գործառվում է նաև «անատամ» նշանակությամբ՝ *«քյաֆտառ իս դառէ, ադամ լէ չունիս»* և այլն:

բ. Իմաստափոխություն գործառական հիմունքով: Իմաստափոխության այս երևույթի առանձնահատկությունն այն է, որ մի առարկայի անվանումն անցնում է նույնանման գործողություն կատարող կամ նույն նպատակին ծառայող մեկ այլ առարկայի: Ապարանի խոսվածքներում բազմաթիվ բնիկ ու փոխառյալ բառեր իմաստափոխվել են գործառական հիմունքով:

Բարբառային **«դէլ»** – «թափառող էգ շուն» բառը խոսվածքներում ձեռք է բերել «անբարոյական կին» նշանակությունը՝ *«իդա կընիգըն մընի դէլ»:*

«Լըժալ» – «սայթաքել» բայը գործառական հիմունքով ձեռք է բերել «դահուկով սահել» իմաստը՝ *«գացիմկ մէր գէղի դօշէր լըժացիմկ, էգանկ»*:

«Լարնգէլ» – «ուտքերի տակ գցել» բայը խոսվածքներում գործառական հիմունքով ձեռք է բերել «հարվածել»՝ *«ընմալ լանգէժի հաժ գօղ-ժօղիմ, օր ուշկըն գընած»*, իսկ Արագածի խոսվածքում «շարժել»՝ *«ձէռօվ լանգէժի, կաթըն թապավ»* իմաստները:

«Խաղ» բառը խոսվածքներում ունի «հող՝ ոսկրերի միացման, շարժման տեղը» իմաստը, այսինքն՝ նշյալ մարմնամասերի միացման այն տեղը, որոնք շարժվում են՝ *«վօղի խաղըն տէղից յէլէ»*:

«Սարէլ» բայը Նիգավանի խոսվածքում ունի «ուշաթափվել» իմաստը՝ *«ինժո՞ւ մարս մարավ»*:

«Յէլնէլ» – «ելնել» բայը խոսվածքներում ձեռք է բերել «ծնվել» իմաստը՝ *«յէրէգ քըխտագ տըղա յա յէլէ ընձի»*:

Բարբառային **«չանգյալ»** – «պատառաքաղ» բառը գործառական հիմունքով ձեռք է բերել «փայտյա կեռ ճանկ, որը կապում են թուփ ծայրին և նրանով ձգում թուփը՝ բեռ բարձելիս» իմաստը՝ *«չանգյալըն թալ խօղի թէլի տագըն, թօ բըռնա, քաշիմ»*:

«Չըբխէլ» – «բուրդ ձաղկել» բայը գործառական հիմունքով «ծեծել» իմաստն է ձեռք բերել՝ *«ընէնժ չըբխէժ, օր բէգըռավ»*:

Բարբառային **«փիլէվալ»** «փահլեվան, լարախաղաց» բառը Ափնայի խոսվածքում գործառական է նաև «զատիկ» կենդանանվան նշանակությամբ՝ *«փիլէվան ա յէլէ քանիդ»*:

Կովկասյան լեզուներից փոխառյալ **«քաժ»** – «թափառող էգ շուն» բառը խոսվածքներում ձեռք է բերել նաև «սիրուհի, անբարոյական կին» նշանակությունը՝ *«շան տըղի ախժիգըն քաժ դուս էգավ»* և այլն:

գ. Հատկանունների հասարակացում: Դիտարկվող խոսվածքներում սահմանափակ գործածություն ունի իմաստափոխության այս երևույթը: Մեզ հանդիպել է հատկանունների հասարակացման ընդամենը մեկ փաստ. աստվածաշնչյան **«Կայէն»** անձնանունը խոսվածքներում հատկանունների հասարակ անուն դառնալու օրենքով ձեռք է բերել միաժամանակ երկու իմաստ. 1) «առողջ, ողջ»՝ *«իդա կայէն տըղէն յօրի յընգավ տէղաշօր»*, 2) «դաժան»՝ *«էդ իմալ կայէն իս, օր կըռնաս ճըժէրուն տըփիս»*:

դ. Քերականական իրողություններն իբրև իմաստափոխական գործոն: Խոսվածքներում կան օրինաչափ գործածություններ, երբ բառերի քերականական մասնիկները ձուլվել են բառարմատին՝ մասնավորելով նրանց իմաստները: Ստորև տանք բառիմաստի այսօրինակ փոփոխության բնորոշ օրինակներ:

Խոսվածքներում գործառվող գրաբարյան **«ըզդար»** բառաձևը, որը կազմված է որոշյալության կցադիր ցուցիչ «զ» նախդրից և «դար» գոյականից, ունի «շատ» մակբայի՝ *«ըզդար կը խօսա դէսից դէնից»* և «այսքան» ցուցական դերանվան՝ *«ըզդար ցանիմկ, բայժ օքուտ չըկա»* իմաստները:

Թեև **«թան»** բառը գրաբարում ենթարկվել է արտաքին ի հոլովման⁷ և, բնականաբար, նշյալ բառի գործիական հոլովը պետք է լիներ «թանիւ», Ջրամբարի խոսվածքում **«թանավ»** - «ապուր» բառը ի ցույց է դնում, որ

⁷ Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, հ. Ա, եր., 2000, էջ 478:

«թան» բառը գործիականում ունի **ա** հոլովիչով հոլովվելու «թանավ» տարբերակը, ուստի՝ «թան» բառի գործիական հոլովի մասնիկը ձուլվել է բառարմատին՝ մասնավորեցնելով նրա իմաստը:

Միջին հայերենում **«կաթն»** բառի գործիական հոլովը լինում է «կաթնօվ», այսօր նշյալ բառաձևը գործածվում է որպես **«կաթնապուր»**՝ *«կաթնօվն կեփին կաթօվ ու բրրրնձօվ, մեծըն էլ պէսօկ ա գըլնան»:*

«Վօղ» – «ոտք» գոյականի սեռական հոլովի «վօղի» բառաձևը խոսվածքներում համապատասխան իմաստափոխությամբ ձեռք է բերել «առողջ, դիմացկուն» իմաստը՝ *«առտէն վօղի ին, լավըցէր ին»:*

«Դրզէլ» – «ուղղել» բայի «դրզվել» կրավորականը համապատասխան իմաստափոխությամբ ձեռք է բերել «առողջանալ, լավանալ» իմաստը՝ *«դրզվէր ին յառտէն»:*

Ըստ իմաստային զարգացման արդյունքի՝ Ապարանի խոսվածքներում մեծ թիվ են կազմում բառիմաստի ընդլայնում, բառիմաստի նեղացում և մասնավորում, իմաստների փոխհաջորդում իմաստափոխության դեպքերը, որոնց անդրադառնանք առանձին-առանձին:

ա. Բառիմաստի ընդլայնում: Սա բառիմաստի փոփոխության այնպիսի դրսևորում է, երբ բառն իր բովանդակության մեջ է առնում նորանոր իրողություններ, հատկանիշներ, այսինքն՝ բառիմաստի ընդլայնումը բառիմաստի բազմացում է: Ապարանի խոսվածքներն ընդգրկուն են իմաստափոխության այս դրսևորմամբ, ընդ որում՝ բառիմաստի ընդլայնման են ենթարկվել հավասարապես և՛ հայերեն, և՛ տարբեր լեզուներից փոխառյալ բառերը:

«Բազրոզան» – «վաճառական» բառը ստացել է նոր «ապրանքի գինն իջեցնել ձգտող մարդ» իմաստը՝ *«դու բազրոզան իս, գընա խօսա»:*

Թուրքերենից փոխառյալ **«բիծ»** – «ապօրինի երեխա» բառը եղիպատրուշի խոսվածքում ունի «զարեկ, ծաղկատար» իմաստը՝ *«բիծ ա յէլ տըղի մըռթընէրին»:*

«Դուռ» բառը բառիմաստի ընդլայնման շնորհիվ ձեռք է բերել «շեն, բակ» նշանակությունը՝ *«ցախավլօվ դըռներն ա կը մաքրին»:*

Թուրքերենից հայերենին անցած արաբերեն **«թամուրզ»** – «մաքուր» բառը Շենավանի խոսվածքում ունի «լրիվ» իմաստը՝ *«թամուզ քանդիկ, պըռձանկ»:*

Թաթարերենից փոխառյալ **«խաթուն»** – «ազնվական տիկին» բառը Ձորագլխի խոսվածքում ձեռք է բերել «զատիկ» կենդանանվան իմաստը՝ *«խաթունն յէլ վօղիդ վըրա»:*

«Կիսադ» – «թրի, կիսատ» բառը Մուլքիի խոսվածքում ձեռք է բերել «թերխաշ» իմաստը՝ *«քու սիրած կիսադ ծուն ա, կիր»:*

Պարսկերեն **«մայա»** – «պանրի մակարդ, մերան» բառը ձեռք է բերել «եկամուտ» իմաստը՝ *«էս տարվա կառտօլից մայա չէղավ»:*

«Չըլուտ» – «մերկ» բառը բառիմաստի ընդլայնման սկզբունքով ձեռք է բերել «աղքատ» իմաստը՝ *«չըլուտ ին, հած էլ չունին ուղէլու»:*

Ռուսերենից փոխառյալ **«ցէփ»** – «շղթա, վզնոց» բառը խոսվածքներում ունի «տրակտորի թրթուր» իմաստը ևս՝ *«մէր գէղըն մինչէվ վածուն թիվ ցէփօվ տըռակտոր չունէր»:*

Թուրքերեն **«փայ»** – «բաժին» բառը ձեռք է բերել «օժիտ» նշանակությունը՝ *«ախճըզա փայըն ա կը տանին»* և այլն:

բ. Բառիմաստի նեղացում և մասնավորում: Ըստ այս իմաստափոխության՝ սահմանափակվում է բառիմաստը, այսինքն՝ հասկացության ծավալը փոքրանում է, և բառի գործածության ոլորտը նեղանում է: Ապարանի խոսվածքներում այսօրինակ իմաստափոխության են ենթարկվել հիմնականում փոխառյալ բառերը: Բերենք օրինակներ:

Արաբերեն **«դալալ»** – «մուճետիկ, փերեզակ» բառը խոսվածքներում ունի «գյուղացու բերքը ամբողջովին գնող վաճառական» իմաստը՝ *«հենժ կը մըղմիցնկ շուկա, դալալներն մեր արթանկըն յէժան կառնին, թանգ կը ծախին»:*

«դէղ» բառը բառիմաստի մասնավորեցման օրենքով ձեռք է բերել «նակարդ» իմաստը՝ *«պանըրի դէղըն պըռձէր ա»:*

Ռուսերեն **«գուր»** – «ատամ» բառը խոսվածքներում ունի միայն «արհեստական ատամ» իմաստը՝ *«գուրըս յընգէ»:*

«Ջարգանդ» – «երկյուղ, սարսափ» բառը ձեռք է բերել «ուժեղ» իմաստը՝ *«գարդանդ տըղա էր, վոշ մէգըն չըր կըռնէ վըրէն»:*

«Ջարգանդէլ» – «ահաբեկվել, երկյուղել» բայը ձեռք է բերել «կատաղել» իմաստը՝ *«ընմալ գարգընդա էդ խըսից ու հասա ըրօնց վըրէն»:*

«Ծըղիգ» – «զամբյուղ» բառը բառիմաստի ծավալի սահմանափակմամբ գործածվում է «լվացած շորերի աման» իմաստով՝ *«ծըղիգըն ցառտէ»:*

Նիգավանի խոսվածքում արաբերենից փոխառյալ **«կուրա»** «վրան, ծածկույթ, տուփ» բառը բառիմաստի նեղացման օրենքով ձեռք է բերել «դազաղ» իմաստը՝ *«դաղիիս կուրին չըկար, բաղանգօվ դաղինկ»:*

«Յավա» – «եղանակ» բառը Քուչակի խոսվածքում ունի հարադրավոր «հավա տանել» կառույցը, որը ենթարկվել է բառիմաստի մասնավորեցման՝ *«նշանակելով «ցուրտը տանել»՝ «հավէն քէգ տարէր ա»:*

«Յօլիկ» – «հողե փոքր տուն» բառը խոսվածքներում այժմ գործածվում է միայն «շնաբուն» իմաստով՝ *«շունըն կաբրի հօլկի մէջ»:*

Ռուսերեն **«նասիլգա»** – «սայլակ, բեռնատար» բառը գործածվում է միայն «զոմից անասունների աղբը դուրս հանող բեռնատար» իմաստով՝ *«նասիլգէն լիք թըրիք ա»:*

«Սուրա» – «չամուսնացած, ամուրի» բառը խոսվածքներում բառիմաստի նեղացման օրենքով «դեռ չծնած ոչխար» նշանակություն է ստացել՝ *«էս շիշակըն լա սուրա յա»:*

Իմաստի նեղացման մի տեսակ է նաև հասարակ անունների հատկանվանացումը, ըստ որի՝ **«կալ»** բառի հոգնակի **«կալէր»** բառաձևը վերածվել է տեղանվան՝ *«կալէրըն կը գըտնըվի գէղի մէջըն»:* **«Ջանգ'ուլում»** ծաղկի անունը վերածվել է նաև ծեսանուն հատկանվան՝ *«Ջանգ'ուլումի օրըն ա, ծաղիգ պըղի քաղինկ, յէրգ ու թաղալու պըղի ըսինկ»:* Փոխառյալ **«դըլուչայ»** – «գեղարոտ» բառը այսօր, թեև պահպանել է իր բուն իմաստը, բայց Ափնայի խոսվածքում այն վերածվել է տեղանվան՝ *«կօվէրըն կը հանգըստանան դըլուչայի դաշտի մէջ»:*

գ. Բառիմաստների բւեռացում: Ըստ այս իմաստափոխության՝ տեղի է ունենում բառի նախնական իմաստին հակադիր իմաստների առաջացում: Դիտարկվող խոսվածքներում կան իմաստների բւեռացման հետևյալ դեպքերը:

«Թըմբըրել» – «թմբել, անզգայանալ» բայը հակադիր «հոգնել» իմաստն է ձեռք բերել՝ *«գօրձ էնէլուց թըմբըրէր իմ պըղի հանգըստանամ»:*

«Սէղբ» – «հանցանք» բառը ձեռք է բերել երկու նոր հակադիր իմաստ՝ 1. «խեղճ»՝ *«մէխկ էրէխա յա, բան մի ըսէկ»*, 2. «ափսոս»՝ *«էդի մէխկ ա, ապսոս ա»*:

Բարբառային **«պըռօշ/պըռունգ»** նույնանիշ բառերն իմաստափոխության են ենթարկվել համանիշային պայմանավորվածությամբ: Գործառական հիմունքով տարբերվում են իրարից՝ ներկայացնելով հակադիր բևեռներ: **«Պըռօշ»** բառը **«շրթունք»** է նշանակում՝ *«պըռօշս ցըռոյիծ կարդէ»*, իսկ **«պըռունգ»** բառը՝ «ինչ-որ բանի ծայր, եզր»՝ *«շօրըս թօշէր իմ գէդի պըռընգիմ»*, թեև Ապարան քաղաքի, Վարդենուտի, Քուչակի խոսվածքներում **«պըռունգ»** բառի հնչյունական **«պըռուկ»** տարբերակը գործառվում է «շրթունք» իմաստով՝ *«ճըժու պըռուկըն լաբըստըրագ ա»*:

դ. Իմաստների փոխհաջորդում: Այս իմաստափոխությամբ բառը կորցնում է իր նախնական, բուն իմաստը՝ ձեռք բերելով նոր իմաստ: Ապարանի խոսվածքներում իմաստափոխության այս երևույթը նույնպես տրամադրում է փաստեր: Ընդ որում, հատկապես փոխառյալ բառերն են կորցրել իրենց բուն իմաստը՝ ձեռք բերելով նոր իմաստ:

«Քայդուշ» – «բու» կենդանանունը իր բուն իմաստով չի գործածվում, այլ վերահիմաստավորմամբ ունի «անբան, ապուշ, ծույլ» իմաստը՝ *«քայդուշ, անաշխադօղ ախճիգ ա»*:

Խոսվածքներում գործող **«պաղըռէլ»** – «պատառել, կտրել, հատել»⁸ բայը խոսվածքներում վերահիմաստավորվել է և ունի «զգվել, նողկալ» իմաստները՝ *«յէս կը պաղըռիմ ըդօնցիծ»*:

Արագածի խոսվածքում **«պաղէլ»** – «փաթաթել, գրկել, ծածկել» բայը վերահիմաստավորվել է՝ նշանակելով «ընկնել»՝ *«տըղէն պաղալ քարի վըրէն»*:

Ապարանի խոսվածքները տրամադրում են լեզվական այնպիսի կառույցներ, երբ իմաստափոխության են ենթարկվում կայուն բառակապակցությունները՝ գործառվելով այլ նշանակությամբ, այսինքն՝ մեկ բառի նշանակություն ունեցող երկանդամ կամ եռանդամ կառույցը վերածվում է վերահիմաստավորված բառակապակցության⁹: Այստեղ էականն այն է, որ գրական հայերենում իմաստային այլ կիրառություններ ունեցող բառերը խոսվածքներում բառակապակցությամբ միանգամայն այլ նշանակություն են արտահայտում, ինչպես՝ **«կանաչ մէռօն»**, **«կարմիր վըզա»** բառակապակցություններն ունեն «կնքահայր» նշանակությունը՝ «մէր կարմիր վըզան ըստեղ չէ, կանաչ մէռօնն ա էգէ, սէղան թալէկ», ժամանականիշ **«պառվի ուլէր»** կապակցությամբ բարբառախոսները նկատի ունեն մարտ ամսի ցուրտ օրերը՝ *«պառվի ուլէրըն ըսկըսէ, բօրան ա»* և այլն:

Վերոշարադրյալից կարելի է անել հետևյալ եզրակացությունները:

ա. Ինչպես վերոբերյալ լեզվական փաստերն են վկայում, Ապարանի խոսվածքներում հիմնականում իմաստափոխության են ենթարկվում նյութական նշանակություն ունեցող խոսքի մասերին պատկանող բառերը՝ գոյականները, ածականները, բայերը, իսկ կապերի ու միջարկությունների իմաստափոխության դեպքերը սակավաթիվ են, ընդ որում՝ իմաստափոխության տեսակներից

⁸ Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, հ. Բ, Եր., 2000, էջ 389:

⁹ Հմմտ. Ա. Պապոյան, Խ. Բադիկյան, ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 41:

հատկապես գործուն են նմանության զուգորդությամբ, գործառական հիմունքով և բառիմաստի ընդլայնմամբ կատարված իմաստափոխությունները:

բ. Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կենդանի խոսքում իմաստափոխության ենթարկված բառամիավորների մեջ մեծ թիվ են կազմում տարբեր ժամանակներում կատարված փոխառությունները, որը վկայում է, որ կենդանի խոսքում փոխառյալ բառերը իրենց առաջնային իմաստները շատ հաճախ կորցնում են, կամ էլ՝ ձեռք բերում երկրորդական, այլ իմաստներ:

գ. Բառերի իմաստների փոփոխությունները հարստացնում, համալրում են լեզվի բառապաշարը նորանոր հասկացություններով¹⁰, և, ինչպես քննարկվող խոսվածքներում է, իմաստափոխության ենթարկված բառամիավորների մեծ մասը հենց օգտագործվում է նորանոր առարկաների, երևույթների, հատկանիշների հասկացություններ անվանելու համար, այսինքն՝ մեկ բառի օգնությամբ արտահայտվում են բազմաթիվ իմաստներ, որը բառապաշարի հարստացման մի ձև է:

դ. Ուսումնասիրվող խոսվածքներում արձանագրված իմաստափոխական երևույթները մեկ անգամ ևս հաստատում են, որ բազմիմաստ բառապաշար ունեցող հայերենում բառիմաստի բազմացումը կենսունակ երևույթ է, և այն անընդհատ զարգանում ու փոփոխություններ է կրում լեզվի զարգացմանը համընթաց՝ ինչպես գրական լեզվում, այնպես էլ բարբառային միավորներում:

ГАРИК МКРТЧЯН – Проявления изменений лексического значения в говорах Апарана. – На основании богатого фактического материала, почерпнутого в многочисленных говорах Апаранского ареала, рассмотрены исторические изменения значений лексических единиц, обусловленные различными факторами. Примечательно, что семантическим изменениям подвергаются как исконно армянские слова, так и иноязычная лексика в процессе заимствования. Особое внимание уделено тому, как слова путём развития новых дополнительных значений обретают многозначность. При этом процессы семантических изменений протекают в различных говорах так же активно, как и в литературном языке.

GARIK MKRTCHYAN – The display of semantic changes in Aparan dialects. – The author provides a wide variety of facts that reveal historical changes in lexical meanings in dialects of Aparan region.

The author believes this kind of change to be conventional, as the spoken language develops and changes over time. In this way, the meaning of a word acquires other meanings; borrowings lose their real meanings and acquire new meanings.

¹⁰ Տե՛ս **Էդ. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 198: